37. ԱՐՋԸ ՆԱՆ ՄԱՐԹԸ

Մին մարթ ա 'ինո̈ւմ։ Ամմեն վախտ քյնում ա ծմակը փա̈դ պերի։ Քյնամ ա տըեսնում մին քարու յրա մին արջ կաղնած։

Վեր եշում ա, տըեսնում մարթը քշտեն, ասում ա.— Հինչ օղիս քյըեզ կտամ, մինա̈կ վեչ մին տեղ ասիս վուչ պո̈ւնիս տըեղը։

— Էտ մարթին յոր ա օնում, տանում մին վըեսկու հոր նշանց տամ, ասում.— Ամեն օր կկյաս մին քսակ վըեսկե տանիս։

Էտ մարթը յոր ա օնում վըեսկեն, քյնո̈ւմ տոն։

Կնեգյը ստիբում ա, թա̈.— Տար էս վըեսկուն տըեղը նշանց տո, տըեղն ասե։

Էտ մարթը ասում ա.— Ո̈ւրո̈ւգյո̈ւնը կասիմ։

Վեր կյամ ա քոն ինիլի վախտը, էտ կնեգյը ստիբում ա։ Մարթն ասում ա.— Էս հինչ արջն ա նշանց տվալ։

Էտ վախտը արջը էն ա 'ինո̈ւմ ակուշկեն տական սկնալիս։ Ասում ա.— Մարթ ախպեր, հա̈լըա̈թ մեհետ էլ կկյա̈ս ծմակը, յըես քյըեղ կասիմ։

Էտ մարթը տասը տարե յա տեռնում, ծմակ չի քյնո̈ւմ։

Մին օր կնեգյն ասում ա.— Ցա քյնա̈ փա̈դ պեր, յա տո̈ւս եք։

Էտ մարթը ճարը կտրած, վխվխելավ մին չվալ ա յոր օնում, քյնա̈մ փա̈դո̈ւ։ Ծմակավը վխվխելավ քյնա̈լիս մին աղվես ա տո̈ւս կյամ, ասում.— Մա՛րթ ախպեր, խե՞ վախում ըս։

Ասում ա.— Ցըես էս հինչ արջան ըմ վախում։

Ասում ա. — Վեր էն արջին սպանիմ, հի՞նչ կտաս։

Ասում ա.— Հ՞ինչ վեր օղիս։

Էտ աղվեսը էտ մարթին յոր ա օնում, քյնամ մին հղրցու կոխկե կրակ անում, ասում.— ես էս մոխրումը թաՎիլ տա՞մ, թող անիմ, էտ վախտը վեր արշը կյա, կասիս. «Արշ ախպեր, եք նի մոտ շվալը — աշկերըտ կքուտանա», էտ վախտը շվալեն ռեխը կկապինքյ, թուլուլ տանք։

Եշում ըն, տրեսնում արշը կյամ ա։ Վեր կյամ ա, մուտանում, աղվեսը սկսում ա թաՎիլ տալ։

Էտ արշեն մարթը ասում ա.— Եք նի մոտ շվալը, աշկերըտ մոխեր կտեռնա։

Արշը նի յա մընում շվալը, կապում ըն, թուլուլ տամ։

Աղվեսն ասում ա. — Դե մըհենգյ, հինշը օղիմ ըեդմա տաս։ Ցրես կօղիմ, վեր տու ինձ շլակիս։

Մարթը շլակում ա, տանում օրեն շներեն կոխկը։ Շները հաշում ըն։

Էտ աղվեսն ասում ա.— Մարթ ախպեր, էտ հի՞նչ պտահից։

Մարթն ասում ա.—Շները քյըեզ ընդեղան տեսալ ըն, հաշում ըն։

Աղվեսն ասում ա. — Մարթ ախպեր, օղում չը՞մ, շներըտ պահե՞, անց կենամ էն սարեն քամակը։

Աղվեսը վեր քյնամ ա, մարթը ետ ա տրեռնում, շվալը վրեսկավ լցնում, կյամ տոն։